15. Y = 8430281.000 X = 4461473.000

16. Y=8430243.158 X=4461492.190

$S = 3.58$ հա
Ընդամենը՝ 9.71հա:

ՌԵԼԻԵՖԻ ՁԵՎԱԳՐԱԿԱՆ ՏԻՊԵՐ ԵՎ ՁԵՎԵՐ

Կոշի տուֆերի հանքավայրի Արեգ տեղամասի տարածքը մտնում է Արագած լեռան նախալեռնային գոտու մեջ և բնութագրվում է հարթաբլրային ռելիեֆով, բացարձակ բարձրությունները տատանվում են 1600-1655մ սահմաններում:

Արագածը լեռնազանգվածը իր շրջապատի նկատմամբ առանձնացած բարձրություն է, արտաքնապես կանոնավոր փոված կոն՝ ատամնավոր գագաթներով, մեղմաթեք լանջերով: Այն Հայկական լեռնաշխարհի չորրորդ (Մասիսից, Սաբալանից, Զիլոյից հետո) և ՀՀ ամենաբարձր լեռն է: Գագաթն ունի 4 սուր կատարներ, որոնցից ամենաբարձրը Հյուսիսայինն է՝ 4090,1 մ: Արևմտյանը՝ 3995,3 մ, Արևելյանը՝ 3908,2 մ, իսկ Հարավայինը՝ 3887,8 մ:


Գագաթային գոտին ունի խիստ մասնատված ալպյան ռելիեֆ: Սառցադաշտային բազմաթիվ կրկեսների և հովիտների վերին մասերում պահպանվում են մնացորդային սառցադաշտեր: Արագածի մերձգագաթային սարահարթը և մեղմաթեք լանջերը մասնատված են մեծ թվով խոր հովիտներով, լանջերին լայն տարածում ունեն չոր ձորերը, որոնց մի մասը հեղեղաբեր է:

Ինտենսիվ սառցադաշտային հողմնահարման պրոցեսների հետևանքով խառնարանն այժմ ստացել է մոտ 600մ խորությամբ թասանման իջվածքի տեսք: Ակտիվության սկզբնական փուլերին բնորոշ են ստրոմբոլյան տիպի ժայթքումները, որոնց արդյունքում գոյացել են բազալտային անդեզիտ-անդեզիտ-դացիտային (բազալտային տրախիանդեզիտ-տրախիանդեզիտ-տրախիդացիտային) կազմի լավային և պիրոկլաստիկ առաջացումների զգալի ծավալներ: Փուլի ավարտական հատվածում ժայթքումները փոխվել են պելեյան-պլինեյան տիպի: Փողաբերանում կուտակված ներքին ճնշման շնորհիվ տեղի են ունեցել ուժգին պայթյուններ, որոնք ոչնչացրել են հրաբխի գագաթային մասը և առաջացրել մեծ պայթյունային կալդերա: Միաժամանակ արտանետվել է գազերով գերհագեցված, բարձր ջերմաստիճանային պայմաններում գտնվող, մոխրից, պեմզայից և մանրահատիկ պիրոկլաստիկայից բաղկացած շիկացած

զանգված: Զանգվածը, սրընթաց շարժվելով, տեղափոխվել է զգալի տարածությունների վրա և նստելով երկրի մակերեսին ու սառչելով, ձևավորել է իգնիմբրիտներ կոչվող դաքիտ-անդեզիտային կազմի ապարների խումբ: Այս ապարները հայտնի են Երևան-Լենինականի, Բյուրական-Շամիրամի, Արթիկի, Անիի և այլ տուֆեր անվանումներով: Արագած հրաբխի ակտիվության վերջնական փուլերն արտահայտված են վուլկանյան տիպին բնորոշ ժայթքումներով, որոնց արդյունքում արտավիժվել են դաքիտային կազմի լավային և ագլոմերատային հոսքեր, տուֆեր, տուֆաբրեկչիաներ, իսկ առանձին դեպքերում ձևավորվել են հրաբխային գմբեթներ (Իրինդ, Ծաղկասար և ուր.): Հրաբխային ակտիվության եզրափակիչ փուլում Արագածի զանգվածի հարավ-հարավ-արևելյան լանջերին, կրկին ստրոմբոլյան տիպի ժայթքումների արդյունքում, ձևավորվել են բազալտային անդեզիտ-անդեզիտային կազմի մի քանի ամենաերիտասարդ մոնոգեն հրաբխային կենտրոններ (Տիրին Կատար, Աշտարակ), իրենց լավային հոսքերով:

Արագածի վահանաձև հրաբխային զանգվածը բնութագրվում է ասիմետրիկ լանջերով՝ հարավային լանջերը կտրուկ անկում ունեն, իսկ հյուսիսային լանջերը՝ մեղմաթեք: Հարավային լանջերի թեքությունները տատանվում են 8-25° սահմաններում, հյուսիսայինները՝ 5-12°: Հարավային և հարավ-արևելյան լանջերին (որտեղ և գտնվում է Կոշի տուֆերի հանքավայրի Արեգ տեղամասի) բնորոշ է կտրուկ անկում, այս հատվածում մերձգագաթային մասն ունի սարահարթին մոտ կառուցվածք, ստորոտում՝ միջին չորրորդական սառցադաշտի էքզարացիայի արդյունքում, ձևավորվել է լայն, հարթ կառուցվածքային աստիճան, որը ներկայացված է հրաբխային լավաների և տուֆալավանների հզոր մերձհորիզոնական կամ մեղմաթեք անկում ունեցող ծածկոցով:

Կոշի տուֆերի հանքավայրի Արեգ տեղամասի և հարակից տարածքներում սողանքային երևույթներ արձանագրված չեն: Դա պայմանավորված է միաձույլ կազմություն ունեցող տուֆերի լայն տարածմամբ:



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Սարահարթեր և սարավանդներ



Մերձգագաթային, հորիզոնականին մոտ, թույլ թեք մասամբ բլրավետ



Ալիքավոր-բլրավետ, թույլ մասնատված

Միջին բարձրություն (1 500-2 500 մ)



ա) հորիզոնականին մոտ

բ) թեք, մասամբ աստիճանակերպ, չափավոր մասնատված (մինչև 2 500 մ)



Նախալեռնային շլեյֆ՝

ա) 2 100-2 300 մ, բ) մինչև 1 500 մ



Թեք, դարավանդավորված (1 200-2 100 մ)

Ցածրադիր (մինչև 1 500 մ)



Թեք, մասամբ հորիզոնականին մոտ, տեղ-տեղ ձորակներով մասնատված (800-1500 մ)



Նախալեռնային, հորիզոնականին մոտ (250-800 մ)



Ալիքավոր, դարավանդավորված




Դարավանդավորված, մասամբ մասնատված ձորակներով


ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԻ ԳԵՐԱԿՇՈՂ ԹԵՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ



Տեկտոնիկան ուսումնասիրում է Երկրի արտաքին պինդ թաղանթի կառուցվածքը, դեֆորմացիաներն ու շարժումները, նրանց դրսևորման, բաշխման, առաջացման, առնչությունների ու զարգացման օրինաչափությունները: Նեոտեկտոնական պրոցեսների անմիջական կամ ածանցյալ արտահայտություններ են երկրաշարժերը, հրաբուխները, լիթոսֆերայի բլոկների տեղաշարժերը, հանքայնացման որոշ երևույթները: Այդ շարժումները արտահայտվում են լեռնաշղթաների դիֆերենցիալ բարձրացումներով: Հայկական հրաբխային բարձրավանդակը վերջին 10 միլիոն տարի ժամանակաշրջանում բարձրացել է մոտ 2000մ, իսկ վերջին 1 միլիոն տարիների ընթացքում՝ մոտ 200մ:



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

-  Սողանքներ
-  Խոշոր սողանքային տարածքներ
- Հողմնահարման գոտիներ
-  Ջերմաքիմիական
-  Ջերմակենսաքիմիական
-  Նեոտեկտոնական բարձրացումների հավասարագծերը (կմ)
-  Տեկտոնական խախտումներ

Տարածքը սողանքավտանգ չէ, ապագա բացահանքի տարածքում սողանքային երևույթները բացակայում են, հանքավայրի երկրաբանական կառուցվածքը բացառում է բացահանքի շահագործման ընթացքում սողանքային երևույթների առաջացումը:

Մոտակա սողանքային մարմինը հանքավայրի տարածքից գտնվում է առնվազն 25կմ հեռավորության վրա :

Տարածքը գտնվում է սեյսմիկ II գոտում, որի բնորոշ է 0.3-0.4g հորիզոնական արագացումներ և 8-9 բալ երկրաշարժի հնարավոր ուժգնություն:

Կոշի տուֆերի հանքավայրի «ԱՐԵԳ» տեղամասը տեղադրված է Արագածի հրաբխային զանգվածի հարավ-արևմտյան լանջի սարավանդային մասում և զբաղեցնում է շուրջ 10 հա տարածք:

2.2. ԿԼԻՄԱՆ

Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքին բնորոշ է շոգ, չոր կլիման: Հուլիսին

օդի միջին ջերմաստիճանը կազմում է 25.2°C: Առավելագույն ջերմաստիճանը հասնում է 41.2°C: Հունվարին օդի միջին ջերմաստիճանը կազմում է -3.2°C: Նվազագույն ջերմաստիճանը հասնում է -24.5°C-ի: Կայուն ձնածածկույթը պահպանվում է միջինը 1-ից 3 ամիս: Օդի միջին հարաբերական խոնավությունը տատանվում է 62%-ի սահմաններում: Քամիների ուղղությունները հիմնականում արևելյան են: Լեռնային երկրներին հատուկ օրինաչափությամբ՝ ՀՀ-ում կլիմայական գոտիները փոխվում են ըստ բարձրության: Ներկայացվող տարածքի կլիմայական պայմանների նկարագրությունը ներկայացվում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 15.01.2024թ. N 03-Ն հրամանով հաստատված «Շինարարական կլիմայաբանություն» ՀՀՇՆ 22-01-2024 փաստաթղթում:

N	Կլիմայական շրջան	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Կլիմայական բնութագիր
	Տաք Ցածրադիր շրջաններ	Մինչև 1200մ	Ամառ՝ շոգ, չոր, միջին ջերմաստիճանը հուլիսին 21°C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին)՝ 35% ցածր, քամու միջին արագությունը՝ 2.0-3.0 մ/վ Զմեռ՝ ցուրտ, անհողմ, միջին ջերմաստիճանը հունվարին՝ 0... 5°C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին)՝ 60-70%, քամու միջին արագությունը՝ 2.0-3.0 մ/վ

Օդի ջերմաստիճան

Բնակավայրի. օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների. °C												Միջին տարեկան. °C	Բացարձակն վազագույն. °C	Բացարձակ առավելագույն. °C
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Աշտարակ	-3.2	-0.1	5.8	11.7	16.5	21.5	25.2	25.2	20.5	13.6	6.2	-0.2	11.9	-24.5	41.2

Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի. օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %															
	ըստ ամիսների												Միջին տարեկան, %	Միջին ամսական ժամը 15-ին		
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		ամենացուրտ ամսվա %	ամենաշոգ ամսվա, %	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	
Ամբերդ	70	69	65	63	63	59	54	51	53	60	68	71	62	67	42	

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի. օդերևութաբանական կայանի անվանումը	միջին ամսական Տեղումների քանակը $\frac{\text{միջին ամսական օրական առավելագույն}}{\text{մմ}}$													Տեղումների քանակը	
	ըստ ամիսների												Տարեկան	Նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Աշտարակ	27	30	36	55	59	33	20	11	13	34	29	30	377	152	225
	24	24	28	39	45	30	45	22	32	43	40	22	45		

Քամիները.

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնեցիությունը, % Միջին արագությունը, մ/վ								Նստ ուղղությունների	Միջին ամսական արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ					
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ- արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս-արևմտյան											
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16					
3. Աշտարակ	հունվար	4	21	22	11	16	12	10	4	-	2.0	Արլ	3.3	Արլ	2.2					
		1.6	2.0	2.2	2.3	2.0	1.8	2.0	2.1											
	ապրիլ	4	18	23	12	15	13	11	4	-	2.7									
		3.7	2.8	2.6	2.8	2.8	2.7	2.9	2.8											
	հուլիս	4	26	23	11	12	11	9	4	-	3.2									
		4.4	3.5	3.3	3.2	3.2	2.6	2.7	3.2											
	դեկտեմբեր	4	24	26	12	13	10	9	2	-	2.2									
		1.7	2.1	2.3	2.4	2.3	2.1	2.1	2.2											

Արևափայլի տևողությունը

Բնակավայրի, օդերևութաբանականկայանի անվանումը	Տևողությունը ըստ ամիսների, ժամ												Տարեկան գումարային
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Աշտարակ	90	118	152	181	242	311	342	326	278	211	154	84	2489

2.3 ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կոշի տուֆերի հանքավայրի «ԱՐԵԳ» տեղամասը տեղադրված է Արագածի հրաբխային զանգվածի հարավ-արևմտյան լանջի սարավանդային մասում և զբաղեցնում է շուրջ 10 հա տարածք:

Տեղամասի երկրաբանական կառուցվածքը բավականին պարզ է: Դրանում մասնակցող ապարների լիթոլոգիական կտրվածքը ներկից-վերև ներկայացված է հետևյալ կերպ.

- անդեզիտաբազալտներ՝ վերին պլիոցեն,
- հրաբխային տուֆեր՝ միջին չորրորդական,
- ժամանակակից նստվածքներ:

- Վերին պլիոցենի անդեզիտաբազալտները համարվում են հրաբխային տուֆերի ստորադիր ապարները, դրանք չեն հատվել հետախուզական հորատանցքերով:

Մակրոսկոպիկ դրանք ամուր, մանրահատիկային, միջին ծակոտկենության, ճեղքավորված մոխրագույն, մուգ մոխրագույն, գրեթե սև լավային ապարներ են: Ապարի ստրուկտուրան պորֆիրային է, ներփակումները ներկայացված են պլազիոկլազով և պիրոքսենով և, որոնց չափերը կազմում են 0.6-0.8 մմ:

Հաստվածքի հզորությունը կազմում է 50-150 մետր:

- Միջին չորրորդականի հրաբխային տուֆերը թե բուն Կոշի հանքավայրում և թե դրա առանձին տեղամասերում ունեն շերտաձև տեսք, գրեթե հորիզոնական տեղադրմամբ:

Հրաբխային տուֆերը տեղամասում ներկայացված են բացառապես երևան-լենինականյան (պիրոկլաստիկ) տիպի կարմրավուն-դարչնագույն տուֆերով՝ օգտակար հաստվածքի 4.0-ից 7.4 մ հզորությամբ:

Մակրոսկոպիկ դրանք մանր հատիկայնությունից մինչև խոշորահատիկ տեղ-տեղ խոռոչավոր տեքստուրայի փխրուն կարմավունից մինչև դարչնագույն լավային ապարներ են: Ապարի կառուցվածքը բյուրեղաքարաբեկորային է, կազմված պլազիոկլազի անկանոն դասավորված լեյստերից, պիրոքսենի՝ ավզիտ հիպերստենի, տեղ-տեղ բիոտիտի բեկորներից՝ ամրացված ապակենման, երբեմն մանրբյուրեղային

ցեմենտացնող նյութով: Հիմնական ապակենման զանգվածը ներփակում է մի քանի մմ-ից 5-6մմ չափերի ծակոտկեն պեմզային և 0.3-1.7մմ չափերի դաջիտների բեկորներ: Հանքային միներալը ներկայացված է մագնետիտով:

Տեղամասի տուֆերն ընդհանուր առմամբ մենաքարային են, տուֆերի վերին՝ մերձմակերեսային մասը մինչև 2.7մ խորությունը ներկայացված է խիստ ճեղքավորված, մասամբ հողմահարված տուֆերով, որոնք պիտանի չեն պատքարի արդյունահանման համար:

Ստորին հորիզոններում պիրոկլաստիկ տուֆերը կարծրանում են՝ վերափոխվելով դաջիտային կազմի տուֆերի: Դաջիտային կազմի տուֆալավաները տեղամասի սահմաններում չեն մերկանում, սակայն կտրվել են բոլոր հետախուզական հորատանցքերով: Դաջիտային տուֆերը ծանր, ամուր աղյուսագույն ապարներ են:

Ապարի հիմնական զանգվածի ստրուկտուրան հիալոպիլիտային է, իսկ ներփա-կումներինը՝ նիկրոլիտային: Ներփակումները, որոնք կազմում են ապարի մինչև 15-20 % ներկայացված են խոշոր մինչև 3-4 մմ թեփուկավոր և պրիզմայաձև պլազիոկլազի ու պիրոքսենի բյուրեղներով և մագնետիտի անկանոն հատիկներով:

Օգտակար հաստվածքի տուֆերի միաձուլությունը խախտված է հիմնականում ուղղաձիգին մոտ անջատման և մասամբ տեկտոնական ճեղքերով:

Իրենց պետրոգրաֆիական և քիմիական կազմով, ֆիզիկամեխանիկական հատ-կություններով տեղամասի տուֆերը բավականին համասեռ են և բնութագրվում են որա-կական ցուցանիշների կայունությամբ:

- Ժամանակակից առաջացումները ներկայացված են կավավազներով և ավազա-կավերով, որոնք պարունակում են տուֆերի և լավային ապարների բեկորներ: Ժամանակակից առաջացումների հզորությունը 0.6-0.8 մ է:

ՀՀ Արագածոտնի մարզի Կոշի տուֆերի հանքավայրի «Արեգ» տեղամասի հաշվեկշռային պաշարները հատատվել են ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ՕՀՊԳ-ի կողմից՝ 08.06.2012թ-ին թիվ 331 որոշումով, և B կարգով կազմում են 540.4 հազ.մ³, ուղիղ կտրվածքի պատքարի ելքը կազմում է 40%:

2.4 ՀՈՂԵՐԸ

Հող, բնական գոյացություն՝ կազմված ծագումնաբանորեն իրար հետ կապված հորիզոններից, որոնք ձևավորվել են երկրի կեղևի մակերեսային շերտերի վերափոխման հետևանքով՝ ջրի, օդի և կենդանի օրգանիզմների ներգործության շնորհիվ:

Հողը երկրակեղևի մակերեսային փխրուն շերտն է, որը փոփոխվում է մթնոլորտի և օրգանիզմների ազդեցությամբ, լրացվում է օրգանական մնացուկներով:


Հողն անընդհատ զարգանում և փոփոխվում է: Բնութագրվում է բերրիությամբ՝ բույսերին մատչելի սննդանյութերով և ջրով ապահովելու ունակությամբ, որի շնորհիվ այն դառնում է արտադրամիջոց, աշխատանքի առարկա, նյութական բարիքների աղբյուր: Հողը գյուղատնտ. արտադրության հիմնական միջոցն է. ագրոտեխնիկական, ագրոքիիական ու բարելավող միջոցառումների կիրառմամբ այն կարելի է դարձնել առավել արդյունավետ, որի ցուցանիշը բույսերի բերքատվությունն է:

Հողերի բնական տիպերի տարածման քարտեզ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

ՀՈՂԱՅԻՆ ՏԻՊԵՐ



5

Լեռնաշագանակագույն



6

Գորշ կիսաանապատային

Կոշի տուֆերի հանքավայրի Արեգ տեղամասի տարածքում հողային ծածկույթը ներկայացված է մուգ-շագանակագույն, շագանակագույն, բաց-շագանակագույն և կիսաանապատային գորշ հողերով:

Կիսաանապատային գորշ հողերով ձևավորվել են տեղակուտակ, տեղակուտակ-ոդոդաբերուկային խճային և խճաբեկորային կարբոնատային մայրտեսակների վրա: Այս հողերը ունեն հիմնականում կավավազային մեխանիկական կազմ, բավականաչափ կմախքային զանգվածի պարունակությամբ: Ստրուկտուրան փոշե-հատիկային կամ վառողանման է, ջրակայուն ագրեգատների քանակը չի գերազանցում 30-35%:

Առանձին տեղերում հողի խորը շերտերում հաճախ բավական քանակությամբ ջրալույծ աղեր են կուտակվում (մինչև 1-1.5%), որոնք գլխավորապես ներկայացված են CaSO_4 , MgSO_4 և այլ աղեր:

Այս տիպի հողերին բնորոշ է հումուսի չնչին պարունակությունը (1-1.5%): Աչքի են ընկնում իրենց քարքարոտությամբ, հանդիպում են ինչպես մակերեսային, այնպես էլ թաղված և կիսաթաղված քարեր: Ռելիեֆի անհարթության, նվազ բուսականության և անբարելավ ֆիզիկական հատկությունների հետևանքով այս հողերը ենթարկվում են ջրային, մասամբ էլ քամու էրոզիայի:

Շագանակագույն հողերը մեծ մասամբ քարքարոտ են, էրոզացված, որոնց մակերեսային քարքարոտությունը կազմում է 70.3%:

Շագանակագույն հողերն ձևավորվել են տիպիկ չոր տափաստանային բուսականության տակ, հրաբխային ապարների հողմահարված նյութերի, ինչպես նաև տեղակուտակ, ոդոդաբերուկ և հեղեղաբերուկ գոյացումների վրա:

Հողաշերտի հզորությունը շրջանում, ինչպես նաև բուն Հարավային տեղամասի սահմաններում միջին հաշվով տատանվում է 20-30սմ-ի սահմաններում: Ըստ մեխանիկական կազմի այս հողերը դասվում են միջակ և ծանր կավավազային տարատեսակների շարքին: Կախված ռելիեֆի պայմաններից և էրոզիայի ենթարկվածության աստիճանից՝ հանդիպում են ինչպես ավելի թեթև, այնպես էլ ծանր մեխանիկական կազմով հողեր:

Հողերի կլանման տարողությունը համեմատաբար ցածր է, որը պայմանավորված է հումուսի սակավ պարունակությամբ և թեթև կավավազային մեխանիկական կազմով: Շագանակագույն հողերի ենթատիպերի ծավալային զանգվածը տատանվում է 1.17-1.44գ/սմ³-ի, տեսակարար զանգվածը՝ 2.49-2.63գ/սմ³-ի, ընդհանուր ծակոտկենությունը՝ 4.34-52.2, խոնավությունը՝ 20-30%-ի սահմաններում: Այս տիպի հողերը պարունակում են մեծ քանակությամբ կարբոնատներ՝ մինչև 12-24%, որն առաջ է բերում հողերի ցեմենտացիա և քարացում: Հողը և փխրուկաբեկորային մայրատեսակը հարուստ են հողալկալի մետաղներով, ֆոսֆորական թթվով և կալիումով: Անմշակ հողերում ստրուկտուրան խոշոր կնձկային է:

Արեգ տեղամասի տուֆերի վերին մերձմակերեսային մասերը մինչև 2.0մ խորությամբ ներկայացված է խիստ ճեղքավորված, մասամբ հողմահարված և խիստ ճեղքավորված տուֆերով, որոնք պիտանի չեն արդյունահանման համար: Ամբողջ տեղամասում տարածված են 0.2-0.3մ հզորությամբ փուխր բեկորային առաջացումներ՝ ներկայացված է շագանակագույն կարբոնատացված հողերի, ավազային, կավավազային կազմի նստվածքների, տուֆերի բեկորների խառնուրդով:

Հանքավայրի տարածքում նախորդ տարիներին ընդերքօգտագործման աշխատանքներ չեն իրականացվել, հանքավայրի տարածքի հողային շերտը խախտված չէ, հայցվող տարածքը ծանրաբեռնված չէ լցակույտերով կամ այլ արտադրական թափոններով:

2.5 ՋՐԱՅԻՆ ԱՎԱԶԱՆԸ

Տարածքի խոշորագույն ջրային երակը Քասախ գետն է, որի ակունքները երկու փոքրիկ գետակներ են, որոնցից մեկն սկսվում է Արագածից, իսկ մյուսը՝ Փամբակի լեռնալանջերից: Քասախը վերին հոսանքում դանդաղահոս է և սակավաջուր, իսկ միջին հոսանքում դառնում է բավական ջրառատ ու արագահոս: Գետաբերանային մասում նա բաժանվում է մի քանի բազուկների և թափվում Սև ջուր գետը: Քասախն ունի 89 կիլոմետր երկարություն: Քասախ գետի ջրերի մոիթորինգի մոտակա դիտակետը գտնվում է Աշտարակ քաղաքից 3,5կմ ներքև, Հարավային տեղամասից մոտ 5 կմ արևելք (դիտակետ 46): Այդ

դիտակետում գետի ջրերը 3-րդ դասի են՝ միջակ որակի, որը պայմանավորված է ԹՔՊ-ի, ֆոսֆատ իոնի, վանադիումի պարունակություններով:

Քասախի մեջ թափվող վտակներից ջրառատը Ամբերդն է: Ամբերդ վտակի հունը գտնվում է հայցվող տարածքից մոտ 1,55կմ հեռավորության վրա դեպի արևմուտք: Սկիզբ է առնում Արագածի հարավային լանջից՝ 3700 մ բարձրությունից: Երկարությունը 36 կմ է, ջրհավաք ավազանը՝ 141 կմ: Գետահովիտը վերին հոսանքում V-աձև է, միջինում և ստորինում՝ խորը, U-աձև: Մնումը խառն է, հիմնականում՝ ձնաանձրևային և ստորերկրյա, վարարումը՝ գարնան վերջին և ամռան սկզբին: Տարեկան միջին ծախսը՝ 1.05 մ3/վ է:

Հիդրոերկրաբանական տեսակետից հայցվող տարածքը համարվում է լավ ինֆիլտրացվող գոտի: Կատարված երկրաբանահետախուզական աշխատանքներիկ ժամանակ պարզվել է, որ տեղամասի տարածքը գործնականում ջրազուրկ է, այստեղ բացակայում են աղբյուրները, ջրհորները և գրունտային ջրերի հորիզոնները:

Ջրերի ներհոսք դեպի ապագա բացահանք հնարավոր է միայն մթնոլորտային տեղումների հետևանքով, սակայն դրանք էլ ենթարկվելով բնական դրենաժի, ներթափանցելով ճեղքերով, անցնում են դեպի ջրամերժ հորիզոն (ավելի քան 60մ խորությամբ երկրի մակերևույթից):

Համաձայն ՀՀ շրջակա միջավայրի նախարարության “Հիդրոոգերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն” ՊՈԱԿ տեղեկագրի 2023 թվականի 4-րդ եռամսյակի Հրագրանի ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 16 դիտակետում, այդ թվում՝ 13 գետային, 2 ջրամբարային և մեկ ջրանցքի: Որոշ օպերատիվ դիտակետերի դիտարկումներից ստացված ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են աղյուսակում:

Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր. տ/վ								
		հոկտեմբեր			նոյեմբեր			դեկտեմբեր		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Հրազդան	Հրազդան	2.56	3.33	77	2.10	3.44	61	2.08	3.10	67
Հրազդան	Արզնի	2.19	3.73	59	2.12	3.69	58	2.01	3.13	64
Հրազդան	Երևան	2.65	3.32	80	4.40	3.94	112	5.51	5.93	93
Մարմարիկ	Հանքավան	0.57	0.48	118	0.64	0.51	125	0.73	0.45	162
Մարմարիկ	Աղավնաձոր	1.65	1.48	111	1.28	1.50	85	1.28	1.33	96
Քասախ	Վարդենիս	0.30	0.53	57	0.34	0.55	63	0.34	0.50	69
Քասախ	Աշտարակ	3.72	2.75	135	2.93	2.93	100	2.86	2.66	107

Հրազդանի ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 20 դիտակետում: Քասախ գետի ջրի որակը Ապարան քաղաքից վերև հատվածում հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Ապարան քաղաքից ներքև ջրի որակը հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), Աշտարակ քաղաքից վերև և ներքև հատվածներում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), գետաբերանում ջրի որակը հոկտեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), նոյեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս):




Գեղարոտ գետի ջրի որակը Արագած գյուղից վերև հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Շաղվարդ գետի ջրի որակը Փարպի գյուղից ներքև հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Հրազդան գետի ջրի որակը Քաղսի գյուղից ներքև, Արգել գյուղից ներքև, Արգնի ՀԷԿ-ից վերև հատվածներում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Երևանից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում ջրի որակը հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Գետառ գետի ջրի որակը գետաբերանում հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Մարմարիկ գետի ջրի որակը Հանքավան գյուղից վերև հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանում՝ հոկտեմբերին և նոյեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս):



2.6 ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Ներածություն

Հետազոտություններն իրականացվել են 2023 թվականին Արագածոտնի մարզի Կոշ համայնքի շրջակայքի քարհանքի համար նախատեսվող տարածքում:

Նյութը և աշխատանքային մեթոդները

Նյութը: Հետազոտվող տարածք կատարած այցելությունների ընթացքում իրականացվել է բույսերի և կենդանիների տեսակային կազմն ուսումնասիրությանն ուղղված ուսումնասիրություններ:

Մեթոդներ: Բոլոր ուսումնասիրությունները կատարվել են դասական բուսաբանական և կենդանաբանական մեթոդներով: Դաշտային ուսումնասիրություններն իրականացվել են երթուղային մեթոդով, որի ժամանակ կատարվել են գրառումներ, որոշ դեպքերում հավաքվել է խոտաբույսերի հերբարիումներ, նկարահանվել են բույսերը և կենդանիները:

Բուսաբանական մաս

Ներածություն

2023 թվականին Արագածոտնի մարզի Կոշ համայնքի շրջակայքի քարհանքի համար նախատեսվող տարածքում կատարվել է բուսածածկի ուսումնասիրություն և տեսակների հավաք, տարածքի բուսականության և ֆլորայի ներկա վիճակի հետազոտման նպատակով (Նկար 1-3):

Համակարգչային Excel ծրագրով ստեղծվել է բուսատեսակների տվյալների բազա, որում ընդգրկվել են բույսերի տեսակային կազմը, տարածումը ուսումնասիրված հատվածներում, տեսակների էկոլոգիական բնութագրերը, կենսաձևերը, «Կարմիր գրքում» ընդգրկվածությունը, էնդեմիզմը, ռելիկտայնությունը:

Տվյալների վերլուծության ժամանակ օգտագործվել են Ա.Բ. Տոլմաչովի (1970) և Լ.Բ. Մալիշևի (1987) կողմից առաջադրված ֆլորայի քանակական վերլուծության մեթոդները: Տեսակների վերաբերյալ տվյալների աղբյուր են հանդիսացել նաև Հայաստանի ֆլորայի 11 հատորները (Флора Армении, 1954-2009), դրանց գիտական անվանումները ճշտվել են ըստ Ս. Չերեպանովի մեթոդական ձեռնարկի (Черепанов, 1995):

Տարածքը ուսումնասիրվել է մարշրուտային մեթոդով, կատարվել են բուսականության և բնակմիջավայրի (Файвус, 2016) նկարագրություն և բուսատեսակների հերքարիումային հավաքներ, Ֆոտոլուսանկարներ, լաբորատոր պայմաններում ֆլորայի կազմը բացահայտելու նպատակով:



**Նկար 1. Ուսումնասիրվող տարածքը Կոշ համայնքի հարևանությամբ
Բուսականությունը**

Ուսումնասիրված տարածքը գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզի Կոշ համայնքի շրջակայքում: Այստեղ հիմնական բնական էկոհամակարգը քարքարոտ լեռնատափաստանն է, որը բավականին խախտված է, բնական լեռնատափաստանային տեսակների հետ մեկտեղ հանդիպում են ինվազիվ և մոլախոտային մի շարք տեսակներ: Տարածքի մեծ մասի բուսածածկը խախտված է, կան ավտոճանապարհների բազմաթիվ ուղիներ, տեղ-տեղ կան կենցաղային աղբի նշանակալից կուտակումներ: Տարածքը ինտենսիվ արածեցվում է, կան բուսականությունից զուրկ հատվածներ, որոնք պայմանավորված են քարերի մեծ մակերեսների մերկացմամբ (Նկար 1-3, 6):

Քարհանքի համար նախատեսված տարածքը բուսաշխարհագրական տեսակետից պատկանում է Հայաստանի Հանրապետության Երևանի ֆլորիստիկ շրջանին (Թախտաջյան, 1978): Ուսումնասիրվող հատվածի բուսականությունը ունի արտահայտված քսերոֆիլ և քսերոմեզոֆիլ բնույթ: Կան բույսերով չծածկված հատվածներ, մեծամասնություն են կազմում բազմամյա և միամյա տեսակները: Ուսումնասիրվող տարածքում ծառաթփատեսակները պրակտիկապես բացակայում

են, իսկ թփերի և կիսաթփերի տեսակների քաակը չնայած քիչ է, սակայն հանդիպում են առանձնյակների մեծ քանակով (Նկար 2-6):



Նկար 2. Քարքարոտ լեռնատափաստանային համակեցություն ուսումնասիրվող տարածքում



Նկար 3. Քարքարոտ լեռնատափաստանի բուսականությունից զուրկ հատվածներ



Նկար 4, 5. Հետազոտվող տարածքի ծառաթփային բուսականության հատվածներ՝ Թթենի սպիտակ (*Morus alba* L.)



Նկար 6. Հետազոտվող տարածքի թփատեսակ՝ Սարի չամիչ բարձր (*Ephedra procera* Fisch. et C.A. Mey)



Նկար 7. Հետազոտվող տարածքի թփատեսակ՝ Դժնիկ քաղցր (*Rhamnus pallasii* Fisch. et C.A. Mey)

Ֆլորան

Քարհանքի համար նախատեսված տարածքից 2023 թ-ին որոշվել են 81 տեսակի բարձրակարգ բույսեր, որոնք պատկանում են 73 ցեղի, 29 ընտանիքի, 3 դասի, 2 բաժնի (Մերկասերմեր, Ծածկասերմեր՝ Միաշաքիլավորներ, Երկշաքիլավորներ) (Աղյուսակ 1, 2):

Աղյուսակ 1.

Կոշ համայնքի միջև քարհանքի համար նախատեսված տարածքի ֆլորայի կազմը

Plantae - ԲՈՒՅՍԵՐ

HIGER PLANTS

GYMNOSPERMAE - ՄԵՐԿԱՍԵՐՄԵՐ

Ephedraceae - Սարիչամիչազգիներ

Ephedra procera Fisch. et C.A. Mey. - Սարի չամիչ բարձր

ANGIOSPERMAE - ԾԱԾԿԱՍԵՐՄԵՐ

Alliaceae - Սոխազգիներ

Allium atrovioleaceum Boiss. - Սոխ մուգ մանուշակագույն

Allium pseudoflavum Vved. - Սոխ կեղծ դեղին

Amaranthaceae - Հավակատարազգիներ

Amaranthus retroflexus L. - Հավակատար սովորական

Apiaceae - Հովանոցազգիներ

Eryngium campestre L. - Երնջնակ դաշտային

Falcaria vulgaris Bernh. - Սիբեյ սովորական

Asclepiadaceae - Թունաթափազգիներ

Cynanchum acutum L. - Շնախոտ սուր

Asteraceae - Բարդաձողկավորներ

Achillea biebersteinii Afan. - Հազարատերևուկ Բիբերշտեյնի

Achillea wilhelmsii K. Koch - Հազարատերևուկ Վիլհելմսի

Artemisia annua L. - Օշինդր միամյա

Artemisia fragrans Willd. - Օշինդր բուրավետ

Artemisia vulgaris L. - Օշինդր սովորական

Carduus hamulosus Ehrh. - Տատասկափուշ կեռանման

Centaurea diffusa Lam. - Տերեփուկ փոված

Centaurea iberica Trev. et Spreng. - Տերեփուկ իբերիական

Chardinia orientalis (L.) O. Kuntze - Շարդինիա արևելյան

Chondrilla juncea L. - Ծամանիկ, Խիժաճարճատուկ կնյունանման

Cichorium intybus L. - Եղերդակ, ճարճատուկ սովորական

Cnicus benedictus L. - Լայնատերևուկ օրհնված

Conyza canadensis (L.) Cronq. - Կոնիզա կանադական

Crupina vulgaris Cass. - Տերեփան սովորական

Helichrysum callichrysum DC. - Անթառամ ոսկեգույն

Lactuca serriola L. - Մառոլ, Հազար, Կաթնուկ կողմնացույց

Onopordum armenum Grossh. - Կառ հայկական

Tanacetum chiliophyllum (Fisch. et C.A. Mey. ex DC.) Sch. Bip. - Տարկավան, Լվածաղիկ
հազարատերև

Taraxacum officinale Wigg. - Խատուտիկ դեղատու

Xeranthemum squarrosum Boiss. - Չորաբույս, Ամմեռուկ չոված

Boraginaceae - Գաղտրիկազգիներ

Echium italicum L. - Իժախոտ իտալական

Echium vulgare L. - Իժախոտ սովորական

Heliotropium europaeum L. - Արևադարձ եվրոպական

Myosotis arvensis (L.) Hill. - Անմոռուկ դաշտային

Brassicaceae - Խաչածաղկավորներ

Alyssum desertorum Stapf. - Վառվռուկ անապատային

Camelina microcarpa Andr. - Սորուկ մանրապտուղ

Capsella bursa-pastoris (L.) Medik. - Ծոռապաշար, Հովվամաղախ

Clypeola jonthlaspi L. - Վահանաբույս շնկոտենային

Erysimum leptophyllum (Bieb.) Andr. - Չագախոտ նեղատերև

Erysimum repandum L. - Չագախոտ կրծված

Lepidium vesicarium L. - Կոտեն բշտիկավոր

Thlaspi perfoliatum L. - Շնկոտեն թափանցված

Capparaceae - Կապարազգիներ

Capparis spinosa L. - Կապար փշոտ

Caryophyllaceae - Մեխակազգիներ

Dianthus orientalis Adams - Մեխակ արևելյան

Silene latifolia (Mill.) Rendle et Britt. - Ծվծվուկ լայնատերև

Chenopodiaceae - Թելուկազգիներ

Atriplex tatarica L. - Թալ թաթարական

Ceratocarpus arenarius L. - Եզնաբզեզ ավազուտային

Chenopodium botrys L. - Թելուկ հոտավետ

Kochia prostrata (L.) Schrad. - Ավելաբույս գետնատարած

Noaea mucronata (Forssk.) Aschers. et Schweinf. - Նոեա սրածայր

Salsola glauca Bieb. - Օշան թխակապույտ

Convolvulaceae - Պատատուկազգիներ

Convolvulus arvensis L. - Պատատուկ դաշտային

Crassulaceae - Թանձրատերևազգիներ

Sedum oppositifolium Sims. - Թանթոնիկ հակադրատերև

Scabiosa rotata Bieb. - Քոսքունիկ անվակերպ

Euphorbiaceae - Իշակաթնուկազգիներ

Euphorbia sequierana Neck. - Իշակաթնուկ Սեզիերի

Fabaceae - Լոբազգիներ

Alhagi pseudalhagi (Bieb.) Desv. - Ուղտափուշ սովորական

Goebelia alopecuroides Bunge - Դառը բիան

Fumariaceae - Ծխաբույսազգիներ

Fumaria schleicheri Soy.-Willem. - Ծխաբույս, Տերուկ Շլեյխտերի

Lamiaceae - Շրթնածաղկավորներ

Ajuga chia Schreb. - Ճանկխոտ հիոսական

Thymus transcaucasicus Ronn. - Ուրց անդրկովկասյան

Linaceae - Վուշազգիներ

Linum nervosum Waldest. et Kit. - Վուշ ջղավոր

Moraceae - Թթազգիներ

Morus alba L. - Թթենի սպիտակ

Papaveraceae - Կակաչազգիներ

Glaucium corniculatum (L.) J. Rudolph - Թխակակաչ եղջերավոր

Papaver hybridum L. - Կակաչ հիբրիդային

Plantaginaceae - Ջղախոտազգիներ

Plantago lanceolata L. - Ջղախոտ, Եզան լեզու նշտարատերև

Poaceae - Հացազգիներ

Aegilops cylindrica Host - Այծակն գլանաձև

Aegilops triuncialis L. - Այծակն եռամատնաչափ

Avena fatua L. - Խրբուկ, Վարսակ դատարկ, Վ. պոչուկ

Bromus japonicus Thunb. subsp. *japonicus* - Ցորնուկ ճապոնական

Dactylis glomerata L. - Ոգնախոտ հավաքված

Eremopyrum distans (K. Koch) Nevski - Անապատասեզ հեռացած

Hordeum marinum Huds. - Գարի ծովափնյա

Poa bulbosa L. - Արոտածիլ, Հուրանախոտ, Դաշտավուկ սոխուկավոր

Setaria viridis (L.) P. Beauv. - Խոզանախոտ, Խոզանուկ կանաչ

Stipa arabica Trin. et Rupr. - Սմբուկ, Փետրախոտ արաբական

Taeniatherum crinitum (Schreb.) Nevski - Երիզախոտ, Երիզաքիստ երկարամազ

Primulaceae - Գնարբուկազգիներ

Androsace maxima L. - Առնասպար խոշոր

Ranunculaceae - Գորտնուկազգիներ

Adonis aestivalis L. - Կուժկոտրուկ ամառային

Ceratocephalus falcatus (L.) Pers. - Եղջրագլխիկ մանգաղանման

Rhamnaceae - Դժնիկազգիներ

Rhamnus pallasii Fisch. et C.A. Mey. - Դժնիկ քաղցր

Rubiaceae - Տորոնազգիներ

Asperula aparine Bieb. - Գետնաստղ կաշուն

Scrophulariaceae - Խլածաղկազգիներ

Bungea trifida (Vahl) C. A. Mey. - Բունգեա եռաբաժան

Urticaceae - Եղինջազգիներ

Urtica dioica L. - Եղինջ երկտուն

Zygophyllaceae - Զուգատերևազգիներ

Tribulus terrestris L. - Տատաշ փովող

Խոշոր կարգաբանական միավորների վերլուծությունից ակնհայտ է, որ ֆլորայում գերակշռում են երկշաքիլավորների դասի ներկայացուցիչները՝ 67 տեսակ: Միաշաքիլավորները ներկայացված են 13 տեսակով (Աղյուսակ 2):

Աղյուսակ 2.

Արագածոտնի մարզի Կոշ համայնքի մերձակայքում գտնվող քարհանքի համար նախատեսված տարածքի ֆլորայի կարգաբանական միավորները

Խոշոր կարգաբանական միավորները			Ընտանիքների քանակը	Ցեղերի քանակը	Տեսակների քանակը
Թագավորություն	Բաժին	Դաս			
Բույսեր	Մերկասերմեր	Գնետայիններ	1	1	1
	Ծածկասերմեր	Երկշաքիլավորներ	26	61	67
		Միաշաքիլավորներ	2	11	13
Ընդամենը			29	73	81

Ֆլորայի ընտանիքների դասավորվածությունը, իր ընդհանուր գծերով, բնորոշ է Իրանա-Թուրանական գավառի ֆլորային, որտեղ տեսակային բազմազանության առումով առաջատար դիրք են գրավում Բարդաձաղկավորների, Հացազգիների, Թելուկազգիների, Խաչաձաղկավորների և այլ ընտանիքները: Ցեղային առումով ևս բազմազանությունը նկատվում է վերոնշված ընտանիքներում (Աղյուսակ 3):

Աղյուսակ 3.

Կոշ համայնքի մերձակայքում գտնվող քարհանքի համար նախատեսված տարածքի ֆլորայի ընտանիքների և ցեղերի սպեկտրը

h/h	Ընտանիքներ	Տեսակների քանակ	Ցեղերի քանակը
1	Բարդաձաղկավորներ - Astera	20	16
2	Հացազգիներ - Poaceae	11	10
3	Խաչաձաղկավորներ - Brassica	8	7
4	Թելուկազգիներ - Chenopodiac	6	6
5	Գաղտրիկազգիներ - Boraginac	4	3

Ֆլորայի կենսաբանական սպեկտրը

Ուսումնասիրվող հատվածի ֆլորայում բույսերի տարբեր կենսաձևերը ներկայացված են հետևյալ հարաբերակցությամբ՝

Ծառեր – 1 տեսակ,

Թփեր և կիսաթփեր- 7 տեսակ,

Բազմամյա խոտաբույսեր – 27 տեսակ,

Երկամյաններ – 9 տեսակ,

Միամյաններ – 37 տեսակ:

Տարածքում գերակշռում են միամյա խոտաբույսերը, երկրորդ տեղը գրավում են բազմամյանները: Միամյանների գերակշռումը վկայում է բուսականության համար անբարենպաստ պայմանների մասին՝ պայմանավորված բնական պայմանների խստությամբ՝ չոր ամառներ, ցուրտ ձմեռներ: Զգացվում է նաև անթրոպոգեն մեծ ազդեցությունը՝ պայմանավորված մանր եղջերավոր անասունների ինտենսիվ արածեցմամբ:

Տարածքում նկատվել է մեկ ծառ՝ թթենու վայրի աճած աճած մեկ առանձնյակ:
Հանդիպում են մեծ քանակով չորադիմացկուն թփեր և կիսաթփեր (Նկար 2-6):

Բուսատեսակների էկոլոգիական առանձնահատկությունները

Ինչպես ցույց են տալիս տեսակների այս կամ այն սուբստրատին հարմարողականության տվյալները՝ հետազոտվող տարածքում հանդիպող բուսատեսակները բաժանվում են հետևյալ հիմնական խմբերի՝ քսերոֆիտներ կամ չորասերներ, քսերո-մեզոֆիտներ և չորա-խոնավասերներ: Մեզոֆիտ կամ խոնավասեր և հիդրոֆիտ կամ ջրասեր բուսատեսակներ մոր կողմից չեն հայտնաբերվել:

Հայաստանի Կարմիր գրքում գրանցված տեսակները և ֆլորայի էնդեմիզմը

Կոչ համայնքի շրջակայքի քարհանքի համար նախատեսված տարածքում Հայաստանի Հանրապետության Բույսերի Կարմիր գրքում (2010) գրանցված տեսակ չի հայտնաբերվել:

Հայաստանի կամ այլ կարգավիճակի էնդեմներ ուսումնասիրվող տարածքում չկան:

Չեն հայտնաբերվել նաև ռելիկտային տեսակներ:

Նշված տարածքում բացակայում են հազվագյուտ էկոհամակարգերը:

Տեսակների տնտեսական նշանակությունը

Ուսումնասիրված տարածքում հանդիպում են մի շարք օգտակար բուսատեսակներ (ուտելի, համեմունքային, մեղրատու, դեղատու, կերային, տեխնիկական և գեղազարդային) (Ղանդիլյան, Բարսեղյան, 1999; Мирзоева, Ахвердов, 1959), սակայն դրանք թե տեսակների քանակով, թե կենսազանգվածով բավականին աղքատ են և բնակչության համար հետաքրքրություն չեն ներկայացնում (Նկար 7-14):



Նկար 8. Օգտակար սննդային տեսակ՝ Կապար փշոտ (*Capparis spinosa* L.)



Նկար 9. Օգտակար դեղատու տեսակ՝ Ուղտափուշ սովորական (*Alhagi pseudalhagi* (Bieb.) Desv.)



Նկար 10. Օգտակար դեղատու և մեղրատու տեսակ՝ Շնախոտ սուր (*Cynanchum acutum* L.)



Նկար 11. Գեղազարդային տեսակ՝ Կոտեմ բշտիկավոր (*Lepidium vesicarium* L.)



Նկար 12. Տեխնիկական տեսակ՝ Դժնիկ քաղցր (*Rhamnus pallasii*)



Նկար 13-14. Մոլխիտտային տեսակներ՝ Տատաշ փովող (*Tribulus terrestris* L.) և Դառը բիան (*Goebelia alopecuroides* Bunge)

Եզրակացություններ և առաջարկներ

- Արագածոտնի մարզի Կոշ համայնքի միջև գտնվող քարհանքի համար նախատեսված տարածքում հայտնաբերվել է 81 տեսակ բարձրակարգ անոթավոր բույս;
- Բուսականությունը հիմնականում լեռնատափաստանային է՝ մասամբ նաև կիսաանապատային՝ Բարդաձաղկավորների, Հացազգիների, Թելուկազգիների, Խաչաձաղկավորների, Շրթնաձաղկավորների ընտանիքներին պատկանող տեսակների գերակշռությամբ;
- Ծառաթփային տեսակներից տարածքում հանդիպում է մեկ վայրաճ թթենի, և թփերի ու կիսաթփերի սակավաթիվ տեսակներ: Հիմնական կենսաձևերը միամյա, այնուհետև՝ բազմամյա խոտաբույսերն են:
- Նշված տարածքում բացակայում են հազվագյուտ էկոհամակարգերը;
- Ուսումնասիրված տարածքի տեսակների մեջ առանձնահատուկ պահպանության կարիք ունեցող, վտանգված, խոցելի, անհետացման եզրին գտնվող և ՀՀ Բույսերի կարմիր գրքում կամ ԲՊՄՄ (Բնության Պահպանության Միջազգային Միություն) կարմիր ցուցակում գրանցված տեսակները բացակայում են;

- Նշված տեսակների մեջ չկան նաև ռելիկտային ու Հայաստանի, Հարավային Անդրկովկասի կամ Կովկասի էնդեմիկ տեսակներ;
- Օգտակար բույսերը տարածքում թե տեսակների քանակով, թե կենսազանգվածով չափազանց աղքատ են և բնակչության համար հետաքրքրություն չեն ներկայացնում:
- ✓ Նշված տարածքում քարհանքի շահագործման համար ֆլորայի և բուսականության առումով որևէ առարկություն չկա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի բույսերի Կարմիր գիրք – 2010:

Ղանդիլյան Ա.Պ., Բարսեղյան Ա.Մ. Հայաստանի վայրի ուտելի և համեմունքային բանջարաբույսերի գենոֆոնդը. Երևան, 1999, 48 էջ:

Малышев Л.И. Современные подходы к количественному анализу и сравнению флор. В кн.: Теоретические и методические проблемы сравнительной флористики. Ленинград, Наука, 1987, с. 142-148.

Мирзоева Н.В., Ахвердов А.А. Декоративные травянистые растения флоры Армении // Бюллетень Ботанического сада АН АрмССР, 17, 1959. с. 89-109.

Тахтаджян А.Л. Флористические области земли // “Наука”, Ленинград, 1978. 248 с.

Толмачев А.И. О некоторых количественных соотношениях во флорах земного шара. Вестн. ЛГУ, № 15, 1970, с. 62-74.

Файвуш Г.М., Алексанян А.С. Местообитания Армении. Ереван, 2016: 1-359.

Флора Армении. 1954-2009.

Черепанов С. К. Сосудистые растения России и сопредельных государств (в пределах бывшего СССР). С.-Петербург, 1995.

Կենդանաբանական մաս

Նյութը և մեթոդները

Կենդանիների ուսումնասիրության ժամանակ օգտագործվել են ընդունված մեթոդներ, այդ թվում առավոտյան և երեկոյան ժամերին տաքացող սողունների հաշվառում երթուղիների երկայնքով, թաքստոցների ստուգում: Յերեկային ակտիվություն ունեցող կենդանիները դիտարկվել են տրանսսեկտային մեթոդով, թաքնված կենսակերպ վարող տեսակներին հայտնաբերելու համար ստուգվել են բոլոր համապատասխան թաքստոցները: Կրծողների ուսումնասիրության նպատակով ստուգվել է դրանց տեղաշարժման արահետների և բների առկայությունը, ինչպես նաև քարերի տակ ժամանակավոր կացարանները:

Երկկենցաղների, թռչունների և որոշ խոշոր կաթնասունների ուսումնասիրության ժամանակ օգտագործվել են նաև հատուկ հավելվածներ, որոնք հնարավորություն են տալիս իրականացնել տեսակի որոշում կենդանու ձայնի միջոցով:

Արդյունքներ

Հետազոտության պահին հանքավայրի շրջակայքի կենդանական աշխարհը ներկայացված է եղել սակավաթիվ տեսակներով, հիմնականում դիտարկվել են թռչուններ:

Հետազոտված տարածքում առկա հետքերի, կենսագործունեության արգասիքների և բների ուսումնասիրությամբ պարզվեց, որ հանրապետության տարածքում լայնորեն տարածված տեսակներից կարող են հանդիպել Սովորական շնագայլը (*Canis aureus* Linnaeus, 1758) և Դեղնափոր տափաստանային մուկ (*Apodemus witherbyi* (Thomas, 1902)): Երկկենցաղներից այս տարածքում կարող է հանդիպել Փոփոխական դողոշ (*Bufo variabilis* (Pallas, 1769)), Փոքրասիական ծատոագորտը (*Hyla savignyi* Audouin, 1827): Սողուններից կարող են հանդիպել Ճարպիկ մողես (*Lacerta agilis* Lantz & Cyrén, 1920), Դեղնափորիկը (*Pseudopus apodus* (Pallas, 1775)):

Դաշտային աշխատանքների ժամանակ տարածքում դիտարկվել են հետևյալ կենդանիները և/կամ դրանց կենսագործունեության հետքերը՝

- **Թռչուններ՝**

Սովորական նապնուկ - *Carpodacus erythrinus* (Pallas, 1770)

Տնային ճնճղուկ - *Passer domesticus* (Linnaeus, 1758)

Շիկամեջք շամփրուկ (Ժուլան) - *Lanius collurio* Linnaeus, 1758

Փուփուլավոր արտույտ - *Galerida cristata* (Linnaeus, 1758)

Փոքր ճանճոք - *Ficedula parva* (Bechstein, 1794)

Ոսկեգույն մեղվակեր - *Merops apiaster* Linnaeus, 1758

Կարմրակատար - *Carduelis carduelis* (Linnaeus, 1758)

- **Կաթնասուններ՝**

Աքիս - *Mustela nivalis* Linnaeus, 1766

Գորշ նապաստակ - *Lepus europaeus* Pallas, 1778

Սովորական աղվես - *Vulpes vulpes* (Linnaeus, 1758)

Սովորական դաշտամուկ - *Microtus arvalis* (Pallas, 1779):

Ըստ առկա գրականության տվյալների հետազոտված տարածքում հանդիպում են նաև Շերտավոր մողես (*Lacerta strigata* (Eichwald, 1831)), Սովորական քարաթռչնակ (*Oenanthe oenanthe* (Linnaeus, 1758)) և Դաշտային ձիաթռչնակ (*Anthus campestris* (Linnaeus, 1758)):

Գրականության տվյալների ուսումնասիրությամբ պարզվել է, որ հետազոտված տարածքից մոտավորապես 8կմ դեպի հյուսիս-արևմուտք կարող է հանդիպել ՀՀ կարմիր գրքում գրանցված Հայկական կամ Ռադդեի իծ (*Montivipera raddei* (Boettger, 1890)):

Հետազոտությունների ընթացքում նշված կենդանին և/կամ դրա հետքեր, կենսագործունեության արգասիքներ չեն հայտնաբերվել:

Եզրակացություն

Նշված տարածքում հանքի շահագործման համար կենդանական աշխարհի առումով որևէ առարկություն չկա:

Գրականության ցանկ

1. Arakelyan M., Danielyan F., Corti C., Sindaco R., Leviton A. Herpetofauna of Armenia and Nagorno-Karabakh // Salt Lake City SSAR, USA, 2011: 154.

2. Dahl S.K. 1954. Zhivotnii mir Armyanskoi SSR [Animal Kingdom of Armenian SSR]. Vertebrates. Yerevan: 415 p (in Russian).
3. Ադամյան Մ. Ս., Կլեմ Դ. Հայաստանի թռչունները: Դաշտային ուղեցույց: Հայաստանի ամերիկյան համալսարան, 2000 - 183 էջ
4. Հայաստանի Կենդանիների Կարմիր գիրք – 2010:
5. Հայրապետյան Տ. Ա., Ասլանյան Ա. Վ., Պապով Գ. Յու., Ղազարյան Ա. Ս., Հայաստանի ողնաշարավոր կենդանիների անվանումների լատիներեն – հայերեն – ռուսերեն – անգլերեն բառարան; Երևան, ԵՊՀ հրատ., 2018, 136 էջ









2.8 ՍԵՅՍՄԻԿ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Տարածքը գտնվում է սեյսմիկ II գոտում, որի բնորոշ է 0.3-0.4g հորիզոնական արագացումներ և 8-9 բալ երկրաշարժի հնարավոր ուժգնություն:

2.9 ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴԻ ՈՐԱԿԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Հանքի տարածքը գտնվում է բնակավայրերից հեռու, այստեղ բացակայում են գործող արդյունաբերական և խոշոր գյուղատնտեսական ձեռնարկություններ, համապատասխանաբար օդային ավազանը չի կրում անտրոպոգեն զգալի ազդեցություն:

Հանքավայրի տարածքում մշտական դիտակայաններ կամ պասիվ նմուշառիչներ չեն տեղադրված և օդային ավազանի աղտոտվածության վերաբերյալ տվյալներ չկան:

Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ անալիտիկ եղանակով: Դրա համար ՀՀ ՇՄՆ «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը առաջարկում է օգտվել «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները» ժամանակավոր առաջարկություններից, որոնք հրատարակված են «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կայքում:

Բնակչության քանակը (հազ.)	Որոշված նյութերի ֆոնային կոնցենտրացիաները (մգ/մ ³)			
	Փոշի	Ծծմբի երկօքսիդ	Ազոտի երկօքսիդ	Ածխածնի օքսիդ
50 - 125	0,098	0,007	0,007	1,3
10 - 50	0,095	0,006	0,033	1.1
< 10	0,071	0,006	0,023	0,8

Ըստ ուղեցույցի, մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար, որոնց թվին է դասվում Կոշ բնակավայրը, օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են՝

- Փոշի՝ 0.071 մգ/մ³;
- Ծծմբի երկօքսիդ՝ 0.006 մգ/մ³;
- Ազոտի երկօքսիդ՝ 0.023 մգ/մ³;
- Ածխածնի օքսիդ՝ 0.8 մգ/մ³:

2.10 ԱՂՄՈՒԿԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ

Հանքավայրերում տեխնիկայի և բեռնատար տրանսպորտի աշխատանքներից գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը սահմանված է 80ԴԲԱ (համաձայն գործող ներմերի):

Բացահանքի շահագործման տարածքում աղմուկի առաջացման աղբյուրներն են՝ տրանսպորտի տեղաշարժը, արդյունահանման, բարձման աշխատանքները:

Դրանց գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$L_{\text{գում}} = L_1 + 10 \lg n$$

որտեղ՝

n - աղմուկի աղբյուրի քանակն է՝ 3,

L_1 - մեկ տեխնիկայի աղմուկի մակարդակն է, 80 ԴԲԱ

Գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը՝ $L_{\text{գում}}$ կազմում է 85ԴԲԱ:

Աղմուկի մակարդակը տարածքի հաշվարկային կետում որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$L = L_{\text{գում}} - 20 \lg r + 10 \lg \Phi - a * r / 1000 - 10 \lg \mu;$$

որտեղ՝

$L_{\text{գում}}$ - 85ԴԲԱ,

r - հեռավորությունն է աղմուկի աղբյուրից մինչև հաշվարկային կետը՝ 30մ,

Φ - ձայնի տարածման համասեռությունն է՝ 1

a - ձայնի մարումը մթնոլորտում՝ 0.7

μ - ձայնի արձակման տարածական անկյունն է՝ $10 \lg \mu = 8$ ԴԲԱ

$$L = 59 \text{ ԴԲԱ}$$

Հաշվի առնելով հանքավայրի հեռավորությունը բնակավայրից՝ 0.38կմ, մեկ հերթափոխով աշխատանքային ռեժիմը՝ գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը Կոշ բնակավայրի սահմաններում կգտնվի նորմայի սահմաններից շատ ավելի ցածր մակարդակի վրա (նորման 45ԴԲԱ):

Աղմուկի ազդեցությունը կանխելու նպատակով մշակել ժամանակացույց, բացառել գիշերային աշխատանքը հանքավայրի տարածքում, խուսափել

աղմկահարույց մեքենաների և սարքավորումների օգտագործումից, անհրաժեշտության դեպքում տեղադրել խլացուցիչներ:

Սանիտարա-պաշտպանիչ գոտի

ՀՀ քաղաքաշինության նախագահի 01.02.2024թ-ի թիվ 06 հրամանով հաստատվել են ՀՀՇՆ 31-04.01-2024 «Արտադրական և հասարակական նշանակության շենքերի ու շինությունների սանիտարապաշտպանական գոտիներ և սանիտարական դասակարգում» ՀՀ շինարարական նորմերը: Ըստ այդ նորմերի բացահանքի համար սահմանված սանիտարա-պաշտպանիչ գոտու լայնությունը կազմում է 300մ, որը ավելի փոքր է մինչև բնակավայր հեռավորությունից, ուստի լրացուցիչ պաշտպանիչ միջոցառումների անհրաժեշտությունը բացակայում է:

2.11 ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐ

Կոշի տուֆերի հանքավայրի Արեգ տեղամասի շրջանում բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան: Բնության հատուկ պահպանվող մոտակա տարածքը՝ «Արագածի ալպյան» պետական արգելավայրը գտնվում է տեղամասից մոտ 19կմ հեռավորության վրա: Հետևաբար բուն տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքները չեն հանգեցնի վտանգված կամ պահպանվող էկոհամակարգերի վրա բացասական ճնշումների դրսևորմանը:

Բուն Հարավային տեղամասում չեն արձանագրվել նաև ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում նշված բուսական կամ կենդանական տեսակների աճելա- և ապրելավայրեր:

Ամբերդի շրջակայքում հայտնի վտանգված տեսակ Նեկտարակորդում եռաոտնաչափ տեսակի արեալ, իսկ Արագածի խառնարանում՝ տեղամասից ավելի քան 20կմ հեռավորության վրա՝ Զուխտակ Օշեի և կեղծափուչիկ մատնաձև կրիտիկական վիճակում գտնվող տեսակների արեալ:

Բյուրական գյուղի շրջակայքում՝ ծովի մակարդակից 1900-2200մ բարձրությունների վրա, մարգագետիններում և մարգագետնատափաստաններում, չոր քարքարոտ և խճաքարոտ լանջերին

աճում է կարծրածաղիկ վտանգված տեսակը: Տեսակի ահպանության միջոցառումներ չեն իրականացվում:

Բյուրական գյուղի շրջակայքում՝ 750-2200մ բարձրությունների վրա, ստորին-միջին լեռնային գոտու չոր քարքարոտ, մերգելային լանջերին աճում է հիրիկ նրբագեղ վտանգված տեսակը, որը պահպանվում է «Սևան» ազգային պարկում, «Էրեբունի» և «Խոսրովի անտառ» պետական արգելոցներում:

Կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներից Բյուրական և Անտառոտ գյուղերի մոտ հայտնի է սիմպեկտա ճպուռ հազվագյուտ տեսակը, որը բնակվում է լճացած ջրերով ջրամբարներում:

ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N 967-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ տարածքի բնության հուշարձանների ցանկը:

ՀՀ Արագածոտնի մարզում հաշվառված բնության հետևյալ հուշարձանները.

Աղյուսակ

Անվանումը	Տեղադիրքը
«Տափակ Բլուր» լիպարիտային գմբեթ	Արագածոտնի մարզ, Թաթուլ գյուղից 2.0կմ հվ-արմ
«Բազալտե արև», եզակի ճառագայթաձև անջատում	Արագածոտնի մարզ, Բյուրական գյուղից 7կմ հս, Արխաշան գետի ձախափնյա մասում Ամբերդ ամրոցի մոտ
«Տատիկ» քարե բնական քանդակ	Արագածոտնի մարզ, Դաշտադեմ գյուղի հվ-արլ եզրին
«Փոքր Արտենի» հրաբուխ	Արագածոտնի մարզ, Արևուտ գյուղից 2կմ հվ-արմ
«Քարե կարկուտ» տեքստուրային առանձնահատուկ ներփակումներ	Արագածոտնի մարզ, Սարալանջ գյուղից մոտ 3.0կմ հս-արմ
Արայի լեռան խառնարանը	Արագածոտնի մարզ, Արտաշավան գյուղից 6կմ հս-արլ
«Անանուն» ժայռ-մնացուկներ	Արագածոտնի մարզ, Սարալանջ գյուղից 4.5կմ հվ-արմ, Արայի լեռ, հրաբխի հարավային լանջերին

«Անանուն» էրոզիոն աշտարակ	Արագածոտնի մարզ, Սարալանջ գյուղից 4կմ արմ, Արայի լեռան հրաբխի խառնարանում
«Չինգիլային դաշտ» քարե կուտակումներ	Արագածոտնի մարզ, Քուչակ գյուղից մոտ 1.5կմ հս-արմ, «Էլոյի բերդ» տանող ճանապարհին
«Մեծ Արտենի» էքստրուզիվ կոն	Արագածոտնի մարզ, բնապատմական համալիր Մեծ Արտենի լեռ (2047մ), քարեդարյան (օլիգոցեն) հասակի եզա
«Քյահրիզ» աղբյուր	Արագածոտնի մարզ, Գեղաձոր գյուղից 8.5կմ հվ-արմ, Գեղաձոր գետի վերին հոսանքի տրոգային կրկեսի վերին եզրին
«Գեղաձոր» աղբյուր	Արագածոտնի մարզ, Գեղաձոր գյուղից 7.5կմ հվ-արմ, Գեղաձոր գետի վերին հոսանքի տրոգային կրկեսում, 9մ-ից 3000 մ բարձրության վրա
«Ջաղացի» աղբյուր	Արագածոտնի մարզ, Ղազարավան գյուղի հվ ծայրամասում, ծ.մ-ից 1180մ բարձրության վրա
«Սրբի» կամ «Քառասուն» աղբյուր	Արագածոտնի մարզ, Ապարան քաղաքի կենտրոնում, ծ.մ-ից 1870մ բարձրության վրա
«Ամբերդ» լիճ	Արագածոտնի մարզ, Բյուրականից մոտ 21կմ հս-արմ, Արագած լեռան հվ-արմ մերձկատարային սարավանդին
«Լեսինգ» լիճ	Արագածոտնի մարզ, Ծաղկաշեն գյուղից մոտ 11կմ հս-արմ, Արագած լեռնազանգվածի հս-արլ լանջին
«Ումրոյ» լիճ	Արագածոտնի մարզ, Ծաղկաշեն գյուղից մոտ 8կմ հս-արմ, Արագած լեռնազանգվածի արլ լանջին
«Գեղարոտի» ջրվեժ	Արագածոտնի մարզ, Արագած գյուղից 11կմ հս-արմ
«Արտաշավան» բնապատմական համալիր	Արագածոտնի մարզ, Արտաշավան գյուղի արլ եզրին

«Աստվածընկալ» հրաբխային տուֆերի ստվարաշերտ	Արագածոտնի մարզ, Հարթավան գյուղից մոտ 4 կմ դեպի արլ, Քասախ գետի կիրճի աջ լանջին
«Քասախի դարավանդներ»	Արագածոտնի մարզ, Օհանավան գյուղի արլ եզրին
«Քասախի կիրճ»	Արագածոտնի մարզ, Սաղմոսավան գյուղ
Մեծ Արտենի էքստրուզիվ կոն բնապատմական հուշարձանը	Արագածոտնի մարզի, Արևոտ գյուղից 2.5կմ հվ-արմ:

Ներկայացված տեղեկատվության վերլուծությունը վկայում է, որ հայցվող տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքները որևիցե վտանգ չեն ներկայացնում թվարկած օբյեկտների համար:

Պատմության, մշակույթի հուշարձաններ և պատմամշակութային միջավայր.

ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 15-ի թիվ 385-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ Արագածոտնի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկը: Կոշ բնակավայրի տարածքում նշված են հետևյալ հուշարձանները.

ԿՈՇ գյուղ

3	4	5	6
	ԱՍՐՈՑ «ԲԵՐԴ»	Ք.ա. 2 հազ.	գյուղից 1 կմ հս, «Պարույրի լճակ» վայրում, բլրի գագաթին
	Դամբարանադաշտ	Ք.ա. 2 հազ.	ամրոցի հս կողմում ընկած սարահարթի վրա
	ԱՍՐՈՑ «ՔԱՐՅԱՆՔԻ ԲԵՐԴ»	Ք.ա. 3 հազ. - Ք.հ. 3 դ.	գյուղից 2 կմ աե, Երևան-Գյումրի ավտոճանապարհի աջ կողմում, Կոշի քարհանքի հանդիպակաց բլրի վրա
	Բնակատեղի	1-3 դդ.	ամրոցի հս կողմում
	Դամբարանադաշտ	Ք.ա. 2 հազ. - Ք.հ. 3 դ.	
	ԱՇՏԱՐԱԿ	Ք.ա. 2 հազ.	գյուղից 1 կմ հս, «Բերդ» ամրոցից 300 մ հս
	ԱՇՏԱՐԱԿ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 1 կմ հս, «Բերդ» ամրոցից 800 մ հս-աե

ԱՇՏԱՐԱԿ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 1 կմ հս, «Պարույրի լճակ» վայրում
ԱՇՏԱՐԱԿ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 1 կմ հս, «Պարույրի լճակ» վայրում, «Բերդ» ամրոցից 800 մ հս-ամ
ԱՇՏԱՐԱԿ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 1 կմ հս, «Պարույրի լճակ» վայրում, «Բերդ» ամրոցից 1 կմ հվ-աե
ԱՇՏԱՐԱԿ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 2 կմ աե, «Քարհանքի բերդի» աե կողմում
ԲՆԱԿԱՏԵՂԻ ԿՈՒԱՇ	Ք.ա. 1 հազ. - Ք.հ. 17 դ.	գյուղի հս մասում
Ամրոց «Աղջկա բերդ»	13-14 դդ.	բնակատեղիի հվ-աե կողմում
ԳԵՐԵՋՄԱՆՈՑ	12-20 դդ.	գյուղի հս եզրին, Սբ. Գևորգ եկեղեցու մոտ
Խաչքարեր	12-15 դդ.	Սբ. Գևորգ եկեղեցուց 20 մ հվ կառուցված նորաշեն մատուռում
Խաչքարեր	12-16 դդ.	Սբ. Գր. Լուսավորիչ եկեղեցու շրջակայքում
Եկեղեցի Սբ. Գր. Լուսավորիչ	13-14 դդ.	
Չիթհան	18-19 դդ.	Սբ. Գևորգ եկեղեցու աե կողմում
ԵԿԵՂԵՑԻ ՍԲ. ՍՏԵՓԱՆՈՍ	7-17 դդ.	գյուղից 1 կմ հս, ձորի աջ ափին
Գերեզմանոց	11-16 դդ.	եկեղեցուց հս, ձորի եզրին
Մատուռ	14-15 դդ.	եկեղեցուց ամ, ժայռի ծայրին
Մատուռ «Կապույտ խաչ»	10 դ.	եկեղեցուց հս-ամ
Ջրամբար	10 դ.	եկեղեցուց ամ
ԽԱՉՔԱՐ	1195 թ.	գյուղից 0.5 կմ հս-ամ, գյուղ մտնող ճանապարհի աջ կողմում
ՀՈՒՇԱՂՔՅՈՒՐ ՍԲ. ՎԱՐԴԱՆ	19 դ.	գյուղի հս-աե եզրին
ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ՋՈՅՎԱԾՆԵՐԻՆ	1978 թ.	գյուղի հվ մասում
ՋՐԱՂԱՑՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ	13-14 դդ.	գյուղից 1 կմ հս, «Պարույրի լճակ» վայրում

	ՔԱՐԱՅՐ - ԿԱՑԱՐԱՆ	միջնադար	գյուղից 1.5 կմ հս, Սբ. Ստեփանոս եկեղեցուց 600 մ հս, ձորի արևելահայաց կողմում
	ՔԱՐԱՅՐ - ԿԱՑԱՐԱՆ	միջնադար	գյուղից 1.5 կմ հս, Սբ. Ստեփանոս եկեղեցուց 600 մ հս, ձորի արևելահայաց կողմում

